

# ԽՐԻՍՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԵԶ

## ՄԱՐԻԱՆՆԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ

**Բանալի բառեր** - Խրիմյան Հայրիկ, Մ.Ջանիկյան, Կոմիտաս, Հ.Մուրադյան, Ռ. Աթայան, Ա.Փահլևանյան, հոռովել, Մ. Մանուկյան, «Մարտունի-77» գիտարշավ, Ջրաղացի կոճիվ, ժողովրդական երգ, հայրենասիրական երգ:

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հոգևոր և մշակութային, հասարակական և քաղաքական գործիչ, խոշոր մտավորական և գրող, հայ ազգի նվիրյալ գավակ Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցին (1820-1907)<sup>1</sup>, իր ողջ կյանքը նվիրեց սեփական ազգին ծառայելու գործին: Մկրտիչ Ա Վանեցին ժողովրդի կողմից առավել սիրված հոգևոր առաջնորդներից էր: Մեփական ժողովրդի շահերը պաշտպանելու և թուրքական ու քրդական իշխանավորների դեմ մղած պայքարի համար ժողովուրդը Մկրտիչ Խրիմյանին մեծարել է «*Հայոց Հայրիկ*» պատվանունով: Կաթողիկոսի ազգանվեր գործունեության համար թուրքական կառավարությունը նրան համարել է քաղաքականապես անբարեհույս հոգևորական և ամեն կերպ խոչընդոտել նրա գործունեությունը <sup>2</sup>: Խրիմյան Հայրիկը հայ ժողովրդի հոգսերի և դատը ցավերի «*խոնարհ երգիչն էր*» և պատահական չէ, որ կաթողիկոսի մարմարե շիրիմաքարի վրա փորագրված է Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցու (Իզմիրլյան) «ՆՈՒԱԳՈՂ ՎՇՏԻՑ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՅՈՑ...» թևավոր դարձած խոսքը<sup>3</sup>:

<sup>1</sup> Մկրտիչ Ա Վանեցին կաթողիկոսության գահին հաջորդեց Մակար Ա Թեղուտցուն և Ամենայն Հայոց կաթողիկոս ձեռնադրվեց 1892-ին:

<sup>2</sup> Այդպես, օրինակ, Կ.Պոլսի հայոց պատրիարքարանը 1862. Խրիմյան Հայրիկին է հանձնել Տարոնի հոգևոր առաջնորդի պաշտոնը և Մուրբ Կարապետ վանքի վանահայրությունը, որտեղ հիմնադրել է հոգևոր ժառանգավորաց վարժարան և «*Արծվի Վասպուրականի*», իսկ հետագայում նաև «*Արծվիկ Տարոն*»(1863-1865 թթ.) երկշաբաթաթերթը Գարեգին Սրվանձտյանի խմբագրությամբ:

<sup>3</sup> Տե՛ս **Աճևեան Հ.**, *Հայոց Հայրիկ. Նուագող վշտից հայրենեաց Հայոց*, հ.1, Թարիզ, 1929, էջ 885:

## ՄԿՐՏԻՉ ԽՐԻՍՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Խրիմյան Հայրիկի և հայ երաժշտության հետ ունեցած կապերի ու առնչությունների մասին լուսաբանողներից առաջինը երաժշտագետ Աննա Ասատրյանն էր՝ կաթողիկոսի ծննդյան 200-ամյա հոբելյանին նվիրված իր արժեքավոր հոդվածում<sup>1</sup>: Մկրտիչ Վանեցու անվան հետ է կապվում բազմաձայնության մուտքը հայ երաժշտություն, ինչպես նաև առաքելական եկեղեցի<sup>2</sup>: Դժվար է գերազնահատել Մկրտիչ Ա Վանեցու դերն ու ազդեցությունը Կոմիտաս Վարդապետի՝ որպես երաժշտի կայացման ու ձևավորման գործում: Խորհրդանշական է, որ Խրիմյանը կաթողիկոս օծվեց հենց Կոմիտասի ծննդյան օրը՝ 1893 թ. սեպտեմբերի 26-ին՝ Վարագա Ս. Խաչի տոնի օրը, Էջմիածնի Մայր տաճարում. «Օրը մոայլ էր և ամպամած: Օծման արարողության ժամանակ փայլատակեց արևը: Հանդիսությանը մասնակցող ժողովուրդը ցնծագին աղաղակներով թնդացրեց օդը՝ երևույթը համարելով երկնային նախանշան»<sup>3</sup>:

Հայ երաժշտության մեջ Մկրտիչ Խրիմյանի մեծ ազդեցության գործուն առաջին հերթին պայամանավորված էր կաթողիկոսի երաժշտական օժտվածությամբ և այն անթաքույց սիրով, որը նա տաճում էր դեպի հարազատ ժողովրդի երգն ու երաժշտությունը: Ավ. Իսահակյանն իր հուշերում գրել է, որ երբ Հայրիկին հարցրեց, թե ինչ երգեր է սիրում երգել, պատասխանը հետևյալն էր.

*«Շարականներ կերգեմ, ներբողներ, սուրբ հարց երգերեն՝ Շնորհալու, Կեչառեցու, Պետրոս Ղափանցու, Գրիգորիս Աղթամարցու, և Բաղդասար դպիրի սիրո տաղերն ալ կերգեմ: Ղափանցին լավ տաղասաց է, Քուչակ Նահապետ անորից վեր է, բայց ժողովրդի երգեր ամենից վեր են. ես շատ կերգեմ մեր Վանա և Մուշի գեղջկական երգեր, որ սովորել եմ վաղուց Վարագա և Ս. Կարապետի ուխտավորներից: Բայց ամենից շատ կսիրեմ Խորենացու ողբը, անոր համար ես մի եղանակ եմ շինել ուկերգեմ: Ինձի կթժվա, թե այդ ողբը Հայ Ազգի ճակատագիրն է ու ամեն դարու ողբը, ինձի այնպես կերևա, թե Քերթողահայրն Մովսես այս օրերին համար է գրել ...»<sup>4</sup>:*

<sup>1</sup> Տե՛ս **Ասատրյան Ա.**, *Ամենայն Հայոց կաթողիկոս Տ.Տ.Մկրտիչ Ա Վանեցի Խրիմյանը և հայ երաժշտությունը* // Պատմաբանասիրական հանդես, 2020, №1, էջ 24-41:

<sup>2</sup> Տե՛ս **Ասատրյան Ա.**, «Նուագող վշտից հայրենեաց Հայոց». *Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը և բազմաձայնության մուտքը հայ երաժշտություն* // «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդես, Ե., «Էդրթ պրինտ», 2020, №3, էջ 2-11:

<sup>3</sup> Տե՛ս **Կոստանյան Է.**, *Մկրտիչ Խրիմյան* (Մահվան 90-ամյա տարելիցին նվիրված) // ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 1997, № 3, էջ 47:

<sup>4</sup> Տե՛ս **Իսահակյան Ա.**, *Երկերի ժողովածու 6 հատորով*, հ. 5, Երևան, 1977, էջ 19: Տե՛ս նաև նույնի . *Խրիմյան Հայրիկը*. – “Էջմիածին”, 1957, ԺԱ, էջ 42–43:

## ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՐՎԵՍՏԸ

Մկրտիչ Ա Վանեցու հանդեպ ժողովրդի տաճած սերը շատ մեծ էր և դա է պատճառը, որ ժողովուրդն իր երգերում կերտեց կաթողիկոսի կերպարը և դեռևս կենդանության օրոք անմահացրեց հայրենանվեր սխրանքները: Պատմա-հայրենասիրական երգերի շարքում իր ուրույն տեղն ունի Մկրտիչ Խրիմյանին նվիրված «*Հայրիկ, հայրիկ, քո հայրենիք*» երգը: Պետք է նշել, որ այս երգի մեղեդին բավականին սիրված է եղել, այդ իսկ պատճառով, տարբեր բանաստեղծական տեքստերին հարմարվելով՝ այն տարածվել է ժողովրդի մեջ: Ռ.Աթայանը նշում է տարբերակներից վեցը, որպես հնագույն օրինակ առանձնացնելով Սպ. Մելիքյանի արխիվում պահվող՝ Գ. Տեր-Ալեքսանդրյանի ձեռագիր երգարանի «Առ սիրուհիս» երգը («Գիշեր-ցերեկ կհառաչեմ, ա՛խ օրիորդ, քո սիրուդ», 1870 թ.):<sup>1</sup> Հետագայում, այդ սիրահարական բառերը փոխարինվել են հայրենասիրականով և երգը դարձել է «Անձուկք պոլսեցի հայ մանկանց»<sup>2</sup>: Հետագայում այն օգտագործվել է Գ.Սրվանձտյանի «Շուշան և Շավարշանա» թատերգության մեջ՝ «Թե Հայրենյաց պսակադիր» նշանավոր երգի տեսքով (1875 թ.):

Այդուհանդերձ, դժվար է որոշել, թե առաջնությունը որ օրինակինն է, քանի որ բոլորն էլ նույն ժամանակաշրջանին են պատկանում: Ուշագրավ է, որ նույն մեղեդիով ժողովուրդը սեր է խոստովանել ինչպես կնոջը, այնպես էլ հայրենիքին՝ նվիրական քնարականության և տառապահույզ հայրենասիրության զգացմունքների արտահայտությամբ: Իր հայտնի ուսումնասիրության մեջ Ա.Սարյանն այս առիթով գրում է. «Բնույթի ու տրամադրության ընդհանրության հետևանքով մեղեդին հավասարապես համապատասխան է երեքի բովանդակությանը: Կարևոր է այն, որ մեկ բանաստեղծության հետ օգտագործված մեղեդին, անփոփոխ կցվելով մի նոր բանաստեղծության, սրա հետ ևս կազմել է գեղարվեստական ամբողջություն»<sup>3</sup>: Մեղեդու առանձնահատկություններից երաժշտագետն ընդգծում է կապը հոգևոր երաժշտության հետ, նշելով երգի հիմքում ընկած դրբիական (առաջին մաս) և էոլական (երկրորդ մաս) միևնույնի հաջորդումը, որը հայ հոգևոր երաժշտության բնորոշ լադերից է և պատկանում է չորրորդ ձայնի առաջին դարձվածքին ու երկրորդ ձայնին<sup>4</sup>:

<sup>1</sup> Կոմիտաս, *Երկերի ժողովածու*, հ.4, խմբ.՝ Ռ.Աթայան, Ե., ՀՀ ԳԱԱ, 1976, էջ 174:

<sup>2</sup> «Սոխակ Հայաստանի» երգարան, Կազմ.՝ Գ.Գրիգորյանց, Բագու, 1874, էջ 70:

<sup>3</sup> Սարյան-Հարությունյան Ա., Հայ քաղաքային ժողովրդական երգարվեստը (19-20-րդ դդ.) //Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ.4, Ե., ՀԽՍՀ ԳԱ, 1973, էջ 152:

<sup>4</sup> Սարյան-Հարությունյան Ա., նշվ.աշխ., էջ 153:

1885 թ-ին, Օսմանյան կառավարության պատահանջով, Մկրտիչ Խրիմյանն ընդմիջտ հեռացավ Վասպուրականից: Կաթողիկոսի հալածանքը չէր կարող անհետք մնալ և չգտնել արտացոլում ժողովրդական բանավոր արվեստում: Արձագանքներից մեկը՝ ծագումով վանեցի Մեսրոպ Ջանիկյանի «*Հայրիկ, հայրիկ, քո հայրենիք*» բանաստեղծությունն էր, որը գրվեց վերը նշված պատրաստի եղանակն օգտագործելու հատուկ նպատակով: «*Հայրիկ, Հայրիկ, քո հայրենիք*»-ը դարձավ նախանցյալ դարավերջի ամենատարածված հայրենասիրական երգերից մեկը, որն էլ գրավեց Կոմիտասի ուշադրությունը: Մկրտիչ Խրիմյանի Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելու առթիվ նույն Մ.Ջանիկյանը 1892-ին հրապարակեց ուրախ, ցնծագին «*Պատասխան*» երգը, որը ժողովրդի կողմից դարձյալ սիրվեց, հրատարակվեց, սակայն մեղեդին ցավոք, չի պահպանվել: Բացառված չէ, որ «*Հայրիկ, Հայրիկ, քո հայրենիք*» երգի մեղեդին էլ նույն բախտին արժանանար և մոռացության մատնվեր, եթե չլիներ Կոմիտաս Վարդապետի նախաձեռնությունը՝ ձեմարանի տարելիցին նախատեսվող միջոցառմանը այդ երգը ներկայացնել քառաձայն ներդաշնակմամբ<sup>1</sup>:

1898 թ. նոյեմբերին, Բեռլինում սովորող Կոմիտասը, Գևորգյան ճեմարանի տեսուչ՝ Կարապետ Կոստանյանին նամակներից մեկում գրել է. «*Եկող տարի ձեմարանի 25-ամյակն է: Հարկավոր է մի քանի բան ունենալ պատրաստ... Գլխավոր ուժս գործ կդնեմ մի խումբ կազմելու... Ես արդեն ունիմ «Տեր կեցո» - և ն «Հայրիկ, հայրիկ, քո հայրենիք» թե խմբի, թե նվագի համար և կպատրաստեմ ժողովրդականներից էլ ընտիրները*»<sup>2</sup>: Էջմիածին վերադառնալուն պես Կոմիտասն ավարտում է «Տեր կեցո» և «Հայրիկ, Հայրիկ, քո հայրենիք» երգերի խմբերգային շարադրանքները, որոնք ներկայացնում են վարդապետի վաղ ստեղծագործական շրջանը: Կարելի է վստահ ասել, որ Կոմիտասը մեծապես նպաստեց «Հայրիկ, Հայրիկ» երգի տարածմանը, քանի որ նրա բազմաձայնեցման և ներդաշնակման շնորհիվ մեղեդին պահպանվեց: Ցավոք, հայկական երգարաններում զետեղված հայրենասիրական նմանատիպ տասնյակ բանաստեղծական տեքստեր այդպես էլ մնացին չերգված: Չլիներ Կոմիտաս վարդապետի այդ նախաձեռնությունը՝ դժվար թե այսօր ունենայինք «Հայրիկ, Հայրիկ» երգի մեղեդին:

<sup>1</sup> Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ.4, խմբ.՝ Ռ.Աթայան, Ե., ՀՀ ԳԱԱ, 1976, №12, էջ 51-52:

<sup>2</sup> Կոմիտաս, նշվ. աշխ. էջ 175:

«ՀԱՅՐԻԿ, ՀԱՅՐԻԿ, ՔՈ ՀԱՅՐԵՆԻՔ»<sup>1</sup>

Հայ րիկ, - հայ - րիկ, քո հայ - րե - նիք Վաս - պու - րա - կան  
մեր աշ-խարհ, Վարդի փո - խան քեզ փուշ րե - թավ,  
ցա - վերդ դա - ռան քյուր հա - գար:

Հայրիկ, հայրիկ, քո հայրենիք,  
Վասպուրական մեր աշխարհ,  
Վարդի փոխան քեզ փուշ թերավ,  
Յավերդ դառան քյուր հագար:

Մայիս եկավ սոխակներով,  
Վարդի թփիկ որոնեց,  
Փոխան թիի փշեր գտավ,  
Լայախառայ ձայն հանեց:

Հայրիկն առաց, - Իմ հայրենյաց  
Փուշն անուշ է, քան գվարդ  
Ես այն փշոց մեջք դարձյալ  
Պիտ որոնեմ սիրուն վարդ:

Այն տայրասուր փշեն ամեն  
Փուշը կապեցեր շար ի շար,  
Թողն՝ չ գլխիս պսակ կապեն,  
Որուն ճակատս է հոծար:

Հայրիկ, հայրիկ, քո սուր ճակատ,  
Այրուն, արցունք են- ո՞ն միշտ,  
Փթթյալ վարդից կարմիր թերթեր  
Կպսակեն փառոք զարդ:

Որբան ստոր դավեր խրեն  
Մեակթիկ ազոավներ,  
Չէ կարեկի արծիվն յուր բարձր  
Կիրթիցն երկիր վար քերդ:

ՀԱՅՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ «ՊԱՐԻ ԼՈՒՍՈՒՆ ԱՍՏՂ ԷՐԱՑ» ԵՐԳԸ

Խրիմյանի մահից հետո, 1907 թ. ծնված տղա երեխաներից շատերին տալիս էին Հայրիկ անունը՝ ի պատիվ սիրված կաթողիկոսի: Այդ տղաներից մեկն էլ ծնունդով շատախցի, անվանի երգիչ, բանահավաք, ազգագրագետ, պատմաբան, վաստակավոր արտիստ Հայրիկ Մուրադյանն էր: 1960-70-ականներին ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի վարիչ Մաթևոս Մուրադյանի նախաձեռնությամբ Հայրիկ Մուրադյանի երգերի ամբողջ երկացանկը ձայնագրվեց, ապա և վերծանվեց Ալինա Փահլևանյանի կողմից<sup>2</sup>: Հ.Մուրադյանն ուշագրավ տեղեկություններ

<sup>1</sup> Նպատակահարմար ենք գտել ներկայացնել միաձայն տարբերակը:

<sup>2</sup> Տե՛ս Հայրենի երգեր, Հ.Մուրադյանի ձայնից վերծանեց, կազմեց և խմբագրեց Ա. Փահլևանյանը, Ե., 2007, «Նոր գիրք», -212 էջ:

է հայտնում, համաձայն որի «Պարի լուսուն աստղ էրևաց» գութաներգի ծագումը կապում են Խրիմյան Հայրիկի անվան հետ.

«...երգը ծնվել է Վանի շրջակա գավառներում, դարի վաթսունական թվականներին, Մկրտիչ Խրիմյանի նախաձեռնությամբ առաջին անգամ Վասպուրականում գյուղատնտեսության մեջ օգտագործվեց գութանը: Երգը արագորեն տարածվեց բոլոր գավառներում: Ներկայացնում ենք այն՝ ինչպես այն սովորել եմ Վանի հայկական դպրոցում 1916 թվականին: Հետագայում, այս երգի շուրջ գրույցի ժամանակ Հայրիկ Մուրադյանը պատմել է հետևյալը: «Պարի լուսուն աստղ էրևաց» երգը հորինվել է Վարագա վանքում: Խրիմյան հայրիկը վանահայր էր: Այնտեղ ժառանգավորաց դպրոց էր բացել և այդ դպրոցի սաները դարձել էին ամբողջ Վասպուրականի ազգագրական պայքարի մարտիկներ: Նրա շնչի տակ հրաշալի սերունդ էր աճում: Խրիմյան հայրիկն էլ նման չէր վանականներից շատերին: Նա ասում էր. «Պետք է հոգևորականն ապրի համեստ, մի պնակ թանապուրով, որպեսզի եկեղեցու եկամուտներն օգտագործի հայրենիքի պաշտպանության համար»: Ահա այս շրջանում էր, երբ ինքը մաճը բռնած վարում էր Վարագա վանքի արտերը, տղաները՝ վանքի հոտաղները, ոգևորված, այս երգն են հորինել»<sup>1</sup>:

Հ. Մուրադյանի տեղեկություններն անշուշտ արժեքավոր են, սակայն կարծում ենք, որ «Բարի լուսուն աստղ էրևաց» գութանավորի երգը շատ ավելի հին է, քան հայ գյուղացու կյանքում երկաթե գութանի հայտնվելը: Երկրագործական աշխատանքների հետ կապված այս արժեքավոր նմուշի տարբերակներից են Կոմիտասի գրառած հայտնի «Լուսաստղ քիթ զցեց դուս»<sup>2</sup> և Սպիրիդոն Մելիքյանի «Վանեցոց գյութնի երգը»<sup>3</sup> գրառումները, որոնք նկարագրում են արևածագը դիմավորող և վաղ առավոտյան հողը մշակող գութանավորին: Այդուհանդերձ, կարևոր չէ՝ կապված է այս երգը երկրագործական աշխատանքների ոլորտում Խրիմյան Հայրիկի կատարած նորամուծությունների հետ, թե ոչ, քանզի հոգևոր առաջնորդի սիրված կերպարն այսպես թե այնպես թափանցել է ժողովրդական երգամտածուղության մեջ և հերոսացվել:

<sup>1</sup> Տե՛ս. Հայրենի երգեր, նշվ.աշխ., էջ 173:

<sup>2</sup> Տե՛ս Կոմիտաս, *Երկերի ժողովածու*, հ.11, Գազմ., խմբ. և ծանոթագրություն՝ Ռ.Աթայանի, Ե., ՀՀ ԳԱԱ, №204, էջ 89:

<sup>3</sup> Տե՛ս Մելիքյան Ս., *Հայ ժողովրդական երգեր և պարեր*, հ.2, Ե.,ՀՍՍՌ ԳԱ, «Հայպետհրատ»,1952, №80, էջ 37 (ձայնագրվել է Կոտայքի մարզի Ախտա գյուղում, 1926-27թթ.,երգասացն է՝ ծագումով վանեցի Մանոյան Ա.):

«ՊԱՐԻ ԼՈՒՍՈՒՆ ԱՍՏՂ ԷՐԵՎԱՅ»<sup>1</sup>

$\text{♩} = 100$

Պա - թի յու - սո      աստղ է      րն - վաց,      ա - դօ - թա - րան

առը - ներն    ի - պաց,      պա - թով    պաց - վեր      լուս ա    դօթ - րան.

սար - ված      Թ - ծիմ,      Էր - թամ      կյու - թան:

1)

ՄԱՆՈՒԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՉԱՅՆԱԳՐԱԾ «ԽՐԻՍՅԱՆ ՀԱՅՐԻԿ» ԵՐԳԸ

Խրիմյան Հայրիկի անվան հետ է կապված մեկ այլ ուշագրավ երգի նմուշ: Որքան էլ զարմանալի կթվա, բայց հայ ժողովրդական երգաստեղծության մեջ պատմական երգերը խիստ սակավաթիվ են և հայ բազմադարյա պատմությունից երգերի տեսքով մեզ շատ օրինակներ չեն հասել: Պատմական երգի հիմնական խնդիրն ու նպատակը՝ արագ արձագանքել պատմական իրադարձություններին և դեպքերին, արտացոլել հասարակական, պատմական և որոշ չափով նաև քաղաքական երևույթները: Սակայն, ի տարբերություն վիպական և էպիկական երգերի պատմական երգերի զգալի մասի կյանքը կարճ է. այդ հանգամանքը պայմանավորված է երգում դրսևորվող իրադարձությունների տևողականությամբ և անցումնային բնույթով, քանզի յուրաքանչյուր պատմական միջադեպի, կամ թեկուզ և խոշոր իրադարձության՝ հաջորդում է նորը, և նախորդը ականալից կորցնում է իր արդիականությունը<sup>2</sup>: Այս առիթով կոմիտասագետ Ռոբերտ Աթայանը գրում է. «*Բուն պատմական, լինի հին, համեմատաբար*

<sup>1</sup> Հայրենի երգեր, նշվ.աշխ., № 42, էջ 75:

<sup>2</sup> Տե՛ս **Բրուտյան Ս.**, «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Ե., «Ամբոց Գրուպ», 2014, էջ 165-169 :

նոր կամ նորագույն ժամանակների երգեր Կոմիտասի գրառումներում ներկայումս չեն երևում, եթե նկատի չունենանք այնպիսի բացառություններ, որպիսիք են օրինակ, «Թալանն էկավ», կամ «Խնուս գեղի մեջտեղը», որ դժվար է ժանրի տիպական օրինակներ համարել»<sup>1</sup>: Անվանի երաժշտագետն իրավացի է, քանզի պատմական երգերն իրապես սակավաթիվ են ոչ միայն Կոմիտասի գրառումներում, այլ առհասարակ՝ հայ ժողովրդական երգաստեղծության շտեմարանում և այս առումով, ստորև ներկայացվող երգն արժանի է ուշադրության:

Պատմական երգերի ճանաչողական արժեքը չափազանց մեծ է և դրա վառ օրինակներից մեկը երաժշտագետ-բանահավաք Մանուկ Մանուկյանի ձայնագրած Խրիմյան Հայրիկի մասին երգն է<sup>2</sup>: Իր երաժշտագիտական և բանահավաքչական աշխատանքներում Մ.Մանուկյանը բազմիցս անդրադարձել է հայ ժողովրդական և աշուղական երգարվեստին վերաբերող հիմնահարցերին, ուշագրավ հոդվածներ և ուսումնասիրություններ կատարել, որից մեկն էլ՝ «Մարտունու շրջանի ժողովրդական երգեր» ժողովածուն է<sup>3</sup>: Մ.Մանուկյանի ժողովածուի IV բաժնում ընդգրկված պատմական երգերի և ձոներգերի շարքում կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին նվիրված մի ուշագրավ երգ է: Այն ունի պարային բնույթ և հնարավոր է, որ կատարվել է հենց պարելու ընթացքում<sup>4</sup>:

Մ. Մանուկյանի ձայնագրած «Խրիմյան Հայրիկ» երգի ակունքները ժողովրդական երգամտածողության մեջ են: Հնարավոր է, որ այն ստեղծված լինի կաթողիկոսի կյանքի օրոք. այդ են վկայում երգում առկա հինգ տների բովանդակությունը, որից յուրաքանչյուրն ասես Մկրտիչ Խրիմյա-

<sup>1</sup> Կոմիտաս, *Երկերի ժողովածու* (այսուհետ՝ ԵԺ), հ.10, խմբ.՝ Ռ.Աթայան, Ե., ՀՀ ԳԱԱ, 2000, էջ 18:

<sup>2</sup> Երաժշտագետ, բանահավաք և մանկավարժ Մանուկ Թորոսի Մանուկյանի (1924-2010) դերը հայ ժողովրդական երաժշտության գրառման, պահպանման և ուսումնասիրման գործընթացում անուրանալի է: Մ.Մանուկյանի կյանքին և ստեղծագործական գործունեությանը նվիրված մեր հետագա ուսումնասիրություններում մանրամասն անդրադարձ կկատարենք երաժշտագետի գիտական և բանահավաքչական աշխատանքներին:

<sup>3</sup> Տե՛ս **Մանուկյան Մ.**, *Մարտունու շրջանի ժողովրդական երգեր (1974-1977 թթ. Գիտարշավի նյութերից)*, խմբ.՝ Դ.Դերոյան, Կ.Խուղաբաշյան, Ե., ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, 1997, - 192 էջ: Այդ արժեքավոր ուսումնասիրությունը լույս տեսավ ՀՀ ԱԺ պատգամավոր, «Հայաստան Շինարար» բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն՝ Վազգեն Պողոսյանի սիրալիր հովանավորությամբ: Այն ընդգրկում է ՀՄՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի 1974-1977թթ. Մարտունու շրջանում կազմակերպած և Մ.Մանուկյանի կողմից իրականացված գիտարշավային նյութերը: Ձայնագրությունները պահվում են ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Ա.Քոչարյանի անվ. ձայնագրարանում (Տուփ NN 343-353):

<sup>4</sup> Երգը ձայնագրվել է Մարտունու շրջանի՝ ներկայիս Գեղարքունիք մարզի Լիճք գյուղում, 9 հուլիսի, 1977: Երգասաց՝ Հայրիկ Ղազարյան (55 տ.), ծնվ. 1922 թ. Ձորագյուղ, մայրենի լեզվի ուսուցիչ, գյուղում համբավ վայելող երգիչ /տե՛ս **Մանուկյան Մ.**, նշվ.աշխ., էջ 180-181/:

նի ազգանվեր գործունեության մի դրվագ լինի: Այդպես, օրինակ, հայկական հարցը ռուսական արքունիքում ներկայացնելու նպատակով Մկրտիչ Ա Վանեցին 1895-ին մեկնեց Ս.Պետերբուրգ<sup>1</sup>.

«ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ»<sup>2</sup>

♩=50 Larghetto

Խը - րիմ - յան Հայ - րիկ,  
Ա<sup>3</sup> - նու - նըդ Մը - կըր - տիչ,  
Դու պի - տի եղ - նիս, Հայ - րիկ ջան, Հա-յը-րև - նը - յաց փըր - կիչ:  
Տարրերակներ  
Դու թա - - գա - վոր Շուտ - վե - րա դար  
խում- բեր կը կազ-

*Տեսության կերթաս  
Դուն թագավորաց,  
Շուտ վերադարձիր, Հայրիկ ջան,  
Աթոռ հայրենյաց:*

Կամ՝ թուրքական կառավարության հանդեպ ունեցած կաթողիկոսի բացասական վերաբերմունքը.

*Բոսֆորի ափեր  
Գիտենք, չես սիրում,  
Փիրուզյա վանքիդ, Հայրիկ ջան,  
Կյանքդ ես նվիրում*

Կաթողիկոսի հետ է ժողովուրդը կապել իր հույսը.

*Դու մեր կենաց լույս,  
Մեր առավոտը,  
Փչիր քո սրինգ, Հայրիկ ջան,  
Ժողվիր քո հոտը:*

Պետք է նշել, որ այս երգի մեղեդին ժողովրդի մեջ տարածված է նաև «Ավերակ ջաղաց» անունով <sup>1</sup>: Երգի գլխավոր հերոսները հայ ազատագ-

<sup>1</sup>Տե՛ս. **Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան**, Ե., հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 2002, էջ746:

<sup>2</sup>Տե՛ս. **Մանուկյան Մ.**, նշվ.աշխ., № 41, էջ 94:

րական շարժման ճանաչված հայրուկներ՝ Սարսափ Առաքելն ու Բիթլիսցի Մուշեղն են, որոնք պայքար են մղել թուրք և քուրդ հրոսակների դեմ<sup>2</sup>: «Ավերակ Ջաղաց» երգի գրեթե բոլոր տարբերակներում հանդիպում է մեկ կամ երկու քառատող, նվիրված Խրիմյան Հայրիկին: Դժվար է ասել, թե որն է եղել առաջնային, քանի որ երգերում նկարագրվող իրադարձությունները՝ Խրիմյան Հայրիկի գործունեությունը ու Ջրաղացի կռիվը, գրեթե նույն ժամանակաշրջանին են վերաբերում: Այդուհանդերձ, կարծում ենք, որ կաթողիկոսի մասին երգն ավելի վաղ հորինվածք է, քանի որ իր հասարակական, քաղաքական ազգանվեր ու եռանդուն գործունեությունը հայ գյուղացու ծանր վիճակը թեթևացնելու, թուրք և քուրդ աղաների, պետական պաշտոնյաների հարստահարությունները սահմանափակելու ուղղությամբ Մկրտիչ Խրիմյանը սկել էր դեռ 50-ականներից: Կարելի է ասել, որ կաթողիկոսը հայոց ազատագրական շարժման սիմվոլներից մեկն է եղել, և հայրենասիրական երգերում նրա հանդես գալը ավելի քան տրամաբանական էր: Պատմական բնույթի և հայրենասիրական ոգով ներշնչված նման երգերը հայ գյուղացու երգարվեստում համեմատաբար ուշ երևույթ է, պայմանավորված օսմանյան լուծի դեմ մղված հայ ժողովրդի ազատագրական պայքարի կազմակերպման գործնական քայլերով: Հայրենասիրական երգերը, որոնք մեծ տարածում ունեցան XIX դ. վերջերին և հատկապես XX դ. սկզբերին, իրենց երգամտածողությամբ, մետրադիոմական կառուցվածքով և լադային դրսևորումներով, զգալիորեն տարբերվում են հայ գեղջկական երգերից: Լինելով ավելի ուշ ժամանակաշրջանի արգասիք, հայ ազգային հայրենասիրական երգերն իրենց վրա կրել են քաղաքային երգի ազդեցությունը, որտեղ գերիշխում էր մաժոր-մինոր լա-

<sup>1</sup> Երգի տարբերակներից մեկը տե՛ս. «Տարոնի ժողովրդական երգեր» ժողովածու /Չայնագրված Արմենուհի Գևոնյանի կատարումից/, Կազմ.՝ Գևոնյան Ա., Ե., «Սովետական գրող», 1978, էջ 29:

<sup>2</sup> Խաթավինի և Ավերակ Ջրաղացի հերոսամարտերը տեղի են ունեցել 1898-ի սեպտեմբերի 3-ին, երբ թուրք-քրդական զինված ջոկատները, հանկարծակիի բերելով, շրջապատել են հայրուկներին: Այս կովին մասնակցել են Սարսափ Առաքելը, Բիթլիսցի Մուշեղը, Առյուծ Ավագը, Բալաբեղ Կարապետը և ուր: Արյունալի կովում Առաքելը ցուցաբերել է մեծ քաջություն և ռազմավարական հմտություններ, որի արդյունքում խումբը կարողացել է խուսափել շրջափակումից: Մութն ընկնելու պես հայրուկները իջել են սարից և շարժվել դեպի Մանազկերտ, որտեղ ամրացել են մի ավերակ ջրաղացում: Թուրք և քուրդ էլուզակները թեպետ քանակով շատ անգամ գերազանցել են Ճարտարի խմբին, սակայն խայտառակ պարտություն են կրել (այս կռիվը պատմության մեջ մնացել է «Ջրաղացի կռիվ» անունով): Սեփական 6 զինվորի կորստի դեմ հայրուկները ոչնչացրել են թշնամու հարյուրից ավել զինվոր: Մութն ընկնելուն պես դուրս են եկել ջրաղացից և բարձրացել Նեմրութ լեռը, որտեղ մարտերը շարունակվել են ևս 2 օր և ավարտվել հայրուկային խմբի հերթական հաղթանակով:

դային համակարգը, ինչպես և քայլերգին բնորոշ ռիթմական տիպական պատկերները: Ներկայացված «Խրիմյան Հայրիկ» երգի (հնարավոր բոլոր տարբերակների) երաժշտական լեզվի առանձնահատկություններին անդրադառնալով հարկ է նշել երգամտածողության որոշ տարրեր, որը հատուկ է գեղջկական երգամտածողությանը: Այդպիսի դրսևորումներից է երգի հենց սկզբնական հատվածում դորիական սեքստայով վերընթաց քայլը դեպի տոնիկա (VI+, VII, I), որը հայ ազգային երգամտածողության կորիզներից մեկն է: Այն առկա է գրեթե բոլոր վիպական և ծիսական երգերում, որոնք հայ ժողովրդական երգաստեղծության հնագույն շերտն են կազմում:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Ներկայացված օրինակներից բացի՝ հնարավոր է, որ Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցու մասին ժողովուրդը հյուսած լինի և ուրիշ երգեր (նկատի չունենք վերը ցուցադրված երգերի մեղեդային այլ տարբերակները, որոնք բնականաբար գոյություն ունեն և որոնք մենք միտումնավոր չենք ընդգրկել): Կարծում ենք, երևույթի մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար եղածն էլ բավական է հասկանալու, թե ինչպիսի հարգանք և սեր է տածել հայ ժողովուրդը դեպի իր սիրելի Հայրիկը: Խրիմյանին նվիրված ժողովրդական երգերն ապացույց են այն իրողության, որ սեփական ազգը կաթողիկոսին շատ սիրել և գնահատել է:

2020 թ-ի համաճարակով պայմանավորված սահմանափակումները թույլ չտվեցին արժանավայել նշել երկու մեծ հայորդյների՝ Վենետիկյան Մխիթարյան միաբանության անդամ, հայ բանաստեղծ, պատմաբան, խոշոր հայագետ Հայր Ղևոնդ Ալիշանի և Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցու ծննդյան 200-ամյա տարելիցները: Նախատեսված միջոցառումներն ու գիտաժողովները հնարավոր եղավ իրականացնել 2021 թ-ին: Խրիմյան Հայրիկին նվիրված մեր ներկա ուսումնասիրությունը մի համեստ լրացում է այն տասնյակ արժեքավոր գիտական հոդվածների և ծանրակշիռ մենագրությունների, որոնք միտված են եղել լուսաբանելու ժողովրդի կողմից մեծ գնահատանքի արժանացած և մեծարված հոգևոր առաջնորդի կերպարը: Կաթողիկոսին նվիրված ազգային երգերը ևս մեկ ապացույց են այն ճշմարտության, թե ինչպիսի հեղինակություն է վայելել հայ ժողովրդի մեջ Մկրտիչ Խրիմյանը: Այդպիսի մեծարանքի, ո՛չ կյանքի օրոք և ո՛չ էլ ետմահու, չի արժանացել թերևս ոչ մի կաթողիկոս:

**Марианна Тигрянян, Образ хримяна айрика в армянском народном песнетворчестве - Роль и значение Католикоса Всех Армян Мкртича I Хримяна в процессе становления и развития армянской музыкальной куль-**

туры неоспоримы. Фактор большого влияния Мкртича Хримяна на армянскую музыку был обусловлен, прежде всего, музыкальным даром католикоса, его нескрываемой любовью к песне и музыке родного народа. С именем Мкртича Ванеци связано введение многоголосия в армянскую музыку, а также в Апостольскую церковь. Любовь народа к Хримяну Айрику была очень велика, поэтому в своих песнях народ воссоздал патриотический образ католикоса и совершённые им при жизни подвиги. Неслучайно, что любимого в народе католикоса величали «Айрик», что в переводе с армянского означает «отец». В армянском народном песнетворчестве сохранились песни, посвящённые Хримяну Ванеци, которые и представлены в данной статье: записанная Комитасом песня «*hАйрик, hАйрик, твоя родина*», знаменитая плужная А.Мурадяна «*Засияла утренная звезда*», а также записанная в Мартунийском районе музыковедом-фольклористом М. Манукяном (1977 г.) песня «*Хримян hАйрик*».

**Marianna Tigranyan, The image of khrimian hayrik in armenian folk songwriting**The role and significance of the Catholicos of All Armenians Mkr-tich A. Vanetsi in the process of establishment and development of the Armenian musical culture is undeniable. The factor of Mkr-tich Khrimyan's great influence in Armenian music was first of all conditioned by the Catholicos's musical gift, his undisguised love for the song and music of his native people. The name Mkr-tich Vanetsi is associated with the introduction of polyphony into Armenian music, as well as the Apostolic Church. The love that the people had for Khrimyan Hayrik was very great; that is the reason why the people created the image of the Catholicos in their songs, the patriotic heroic deeds performed during his life. It is not accidental that the people honored him with the title "Father". There are not many songs dedicated to the Catholicos in Armenian folk songs, but what is there is very valuable. In this article we have tried to bring those songs together, analyze them and present them to the public. The article includes Komitas' "Father, Father, your homeland" dedicated to Khrimyan Hayrik, Hayrik Muradyan's "Dance moon was a star", as well as "Khrimyan Hayrik" (1977) recorded by musicologist-folklorist Manuk Manukyan in Martuni region.

Ուղարկվել է խմբագրություն 12.04.2022թ.

Գրախոսվել է 26.04.2022թ.

Ստորագրվել է տպագրության 21.04.2022 թ.